ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/02

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Գասպարյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբերի ներկայացուցիչներ՝ Հասմիկ Ենգոյան, Արթուր Պարանյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 21.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ս.թ. մարտի 19-ի նիստի թիվ 5-րդ արձանագրությամբ կայացրած որոշումը, քանի որ դրանից բխող հետագա գործողությունները կատարելու դեպքում բողոքը կդառնա առարկայազուրկ և դրանով «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ին կհասցվեն վնասներ:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ ս.թ. մարտի 7-ի, 15-ի, 19-ի նիստերի համապատասխանաբար թիվ 3-րդ, 4-րդ, 5-րդ արձանագրություններով կայացրած որոշումները՝ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ գնային առաջարկը բավարար գնահատելու, 1-ին

տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր պահանջելու, գնահատելու և հաղթող ճանաչելու վերաբերյալ:

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19»» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին վերագնահատել «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ գնային առաջարկը»:

Բողոքներ քննող անձի կողմից 17.04.2019 թվականին բողոքն ընդունվել է վարույթ և 22.04.2019 թվականին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 30.04.2019 թվականին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2019 թվականին:

2. <u>«Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Բողոքաբերը բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ՓՐՓՐԱՐԱՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցում:

Վերոնշված գնանշման հարցման մասնակցության հայտ են ներկայացրել 4 ընկերություն, որոնց թվում է նաև «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19»» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 07.03.2019թ. ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ 07.05.2018թ. գնահատող հանձնաժողովը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, որի նրկայացրած գնային առաջարկի արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) նշվել է 5 083 333 ՀՀ դրամ: Մրցույթի հրավերի 5.2 կետով սահմանված է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

«Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ հաշվարկը՝

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Փրփրար	5 083 333 հինգ միլիոն ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք	1 016 667 մեկ միլիոն տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց	6 100 000 վեց միլիոն մեկ հարյուր հազար

Գնահատող հանձնաժողովը մարտի 7-ի թիվ 3 արձանագրությամբ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գնահատել է բավարար՝ հիմք ընդունելով գնային առաջարկով ներկայացրած Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) 5 083 333 դրամ, իսկ մարտի 19-ի թիվ 5 արձանագրությամբ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ նշել է 5083.33 հազար դրամ առանց ԱԱՀ, այսինքն 5 083 330 դրամ:

Եթե այս երկու թվերին ավելացնեք ավելացված արժեքի հարկը 5 083 333 + ԱԱՀ 1 016 666.6 = Ընդհանուր Գումարը ստացվում է 6 099 999.6, իսկ մյուս դեպքում 5 083 330 + ԱԱՀ 1 016 666 = Ընդհանուր Գումարը 6 099 996: Հաշվարկի հիմք է հանդիսանում առանց ԱԱՀ–ի գումարը, որին ավելացվում է ԱԱՀ-ն, և դրանց հանրագումարն էլ կազմում է Ընդհանուր գումարը, մի դեպքում՝ 6 099 999.6, իսկ մյուս դեպքում՝ 6 099 996 :

Այսպիսով, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերին «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկի (այսուհետ՝ Գնային առաջարկ) հայտը ենթակա է մերժման, քանի որ Գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ կոպիտ սխալ, մասնավորապես Գնային առաջարկի «Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)», «ԱԱՀ» և «Ընդհանուր գինը» սյունակներում նշված թվերի հաշվարկը ճիշտ չէ:

Այսպես՝ Գնային առաջարկի «Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)» սյունակում պետք է նշվի առաջարկվող արժեքը, «ԱԱՀ» սյունակում նշվում է առաջարկվող արժեքից հաշվարկվող և վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի չափը, իսկ «Ընդհանուր գինը» սյունակում նշվում է առաջարկվող արժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը:

- «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գնային առաջարկում «Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)» սյունակում նշված թվից՝ այն է՝ 5083333 –ից ԱԱՀ-ն հաշվարկելու դեպքում ստացվում է Գնային առաջարկում նշված՝ 1016667 թվից տարբերվող թիվ՝ այն է՝ 1016666,6 թիվը (5083333 x 20% = 1016666.6),
- Արդյունքում, Գնային առաջարկի «Ընդհանուր գինը» սյունակում նշված՝ 6100000 թիվը ևս չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)» սյունակում նշված՝ 5083333 թիվը ԱԱՀ-ի ճիշտ

(իրական)՝ 1016666,6 թվին գումարելու դեպքում կստանանք ոչ թե Գնային առաջարկում նշված 6100000 թիվը՝ այլ՝ 6099999,6 թիվը:

- Ավելին՝ եթե հիմք ընդունենք Գնային առաջարկի «Ընդհանուր գինը» սյունակում նշված 6100000 թիվը որպես հաշվարկի ելակետային տվյալ, ապա 6100000-ից հաշվարկվող ԱԱՀ-ի գումարի չափը կկազմի 1016666,666666667 (6100000/6 = 1016666,666666667): Հետևաբար «Ընդհանուր գինը» սյունակի թվի և ԱԱՀ-ի ստացված ճիշտ (իրական) թվի տարբերությունը կկազմի ոչ թե «Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)» սյունակում նշված՝ 5083333 թիվը այլ՝ 5083333.333333333 թիվը: Դեռ ավելին գնումների օրենսդրությունը չի մասնավորեցնում, որ գնային առաջարկով ներկայացրած տասնորդական թվերը պետք է կլորացնել, խոսքը չի գնում հազարերորդական թվերի կլորացման մասին:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ին ընդունված N 526-Ն որոշման /այսուհետև Կարգ/ 32-րդ կետի 2-րդ մասով սահմանվում է

- 2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

- Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

- Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

- Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

- ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

- բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

- գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Տվյալ պարագայում «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկում ներառված թվերի հաշվարկը չի համապատասխանում իրականությանը և սխալ է, քանի որ առկա է երկու սխալ, այսպես հաշվարկի ելակետ է հադիսանում 5 083 333 դրամը, որի ԱԱՀ-ն պետք է նշվեր 1 016

666.60 դրամ, փոխարենը նշվել է 1 016 667 դրամ, իսկ Ընդհանուր գինը պետք է նշվեր 6 099 999.60 դրամ, մինչդեռ նշվել է 6 100 000 դրամ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Գնային առաջարկը շտկման ենթակա չէ:

Վերոգրյալից ելնելով, ակնհայտ է դառնում, որ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գնային առաջարկում նշված տվյալների հաշվարկները սխալ են, իրականությանը չեն համապատասխանում, ինչն էլ իր հերթին չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը վերջինիս գնային առաջարկը ենթակա է մերժման:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

2.2. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2.3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերջինս երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, դրսևորել է խտրական վերաբերմունք, մասնավորապես, Ընկերության նկատմամբ: Ավելին, գնահատող հանձնաժողովը գնման գործընթացում չի ապահովել իր հայեցողական իրավունքի միատեսակ կիրառությունը, դրանով իսկ հաստատելով իր կողմից խտրական վերաբերմունքի

առերևույթ դրսևորում՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները: Այսինքն երաշխավորվում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանն ու կիրառմանը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Տվյալ կոնկրետ դեպքում գնահատող հանձնաժողովը գնահատել է միայն գնային առաջարկի 3-րդ, 4-րդ, 5-րդ սյունակներում տառերով և թվերով գրվածների հանրագումարը:

Մինչդեռ առկա թվերում կատարված հաշվարկը սխալ է:

«Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել է սխալ և հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Ուստի ընկերության գնային առաջարկը պետք է գնահատվեր անբավարար, հրավերի պայմաններին ոչ համապատասխան և մերժվեր: Գնահատող հանձնաժողովը պարտավոր էր համեմատել գնային առաջարկի յուրաքանչյուր սյունակում ներառված թվերը՝ որպես ելակետ դիտել արժեք սյունակում նշված գումարը: Մրցույթի հրավերի 8.2 կետով հստակ սահմանված է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Տվյալ պարագայում գնային առաջարկի հանրագումարը համապատասխանում է, սակայն հաշվարկը, որի արդյուքում ձևավորվում է պայմանագրի գինը «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված է թերի և սխալ, ուստի հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր: Հատկանշական է նաև, որ հարյուրերորդական, հազարերորդական թվերի վերջին նիշերը կարելի է կլորացնել, քանի որ դա ունի անվերջություն, բայց տվյալ դեպքում այն ամբողջական թիվ է և ոչ անվերջական: Յուրաքանչյուր թիվ, լինի դա հարյուրերորդական, տասնորդական, բացարձակ թիվ է և կիրառական մաթեմատիկայում, հաշվողական համակարգում, ինչպես նաև հաշվապահական հաշվառման գործընթացում օգտագործվում է որպես թվաբանական, քանակական հաշվարկման ցուցանիշ և որպես թվանիշ, որը կիրառելի է մի շարք թվաբանական գործընթացներում:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովը չի պահպանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը, այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, մասնավորապես մրցույթի հրավերի 8.2 կետով սահմանված է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Տվյալ պարագայում գնահատումն իրականացվել է անհասկանալի ձևաչափով, կայացվել է մրցույթի հրավերի պահանջներին և այլ իրավական ակտերին հակասող և սխալ որոշում: Թեև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով շեշտադրվում է այն հանգամանքը, որ գնումների, այդ թվում՝ բողոքի

քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ գնահատող հանձնաժողովի որոշումը բովանդակային առումով վարչական ակտին բնորոշ ակտ է, քանի որ համապատասխան մասնակցի և պատվիրատուի միջև պայմանագիր կնքելու հարցն ուղղակիորեն պայմանավորվում է այդ որոշմամբ: Հետևաբար՝ համանման հարաբերությունները կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը («Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը») օրենքի անալոգիայով կիրառելի է նաև գնահատող հանձնաժողովի գործունեության նկատմամբ: Ավելին, անգամ անկախ մեջ բերված դրույթից և իրավահարաբերության տեսակից (վարչական կամ քաղաքացիաիրավական), տվյալ կոնկրետ իրավահարաբերության յուրաքանչյուր մասնակից իր գործողություններում կաշկանդված է օրենքով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակով և իր իրավազորության տիրույթից դուրս որևէ գործողություն պետք է որակվի որպես հակաիրավական արարք: Հակառակ դեպքում ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը ցանկացած ժամանակ կարող է շրջանցել օրենքն ու ընդունել կամայական որոշում, ինչի արդյունքում կարժեզրկվեն այդ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող իրավանորմերը՝ վերածվելով հռչակագրային դրույթների և, որպես հետևանք, կձևավորվի անկանխատեսելի իրավակիրառ պրակտիկա: Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր գնահատումն իրականացնել նախ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան, ինչը, ինչպես վերը փաստվել է, չի իրականացրել վերաբերելի օրենքների և այլ իրավական ակտերի շրջանակներում:

Վերլուծելով վերոգրյալները մեկ համատեքստում, ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել իրավական ակտերի ակնհայտ և կոպիտ խախտումներով, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջներին հակասող»:

Սույն թվականի մարտի 29-ին «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալ լրացուցիչ նկատառումները.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը թիվ «ԳԲՔԱ-ԷՍ-2019/39» բողոքի քննությանը վերաբերյալ՝ վերաբերելի չէ բողոքով ներկայացված խնդրին, մասնավորապես ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածը վերաբերվում է հարկ վճարողների հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառմանը: Այն վերաբերվում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերի կազմանն ու հաշվառմանը:

«Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հաշվապահական հաշվառման, հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման փատաթուղթ չէ, և որևէ առնչություն չունի դրանց հետ, հետևաբար չի կարող հայեցողականորեն դիտարկվել այդ տեսանկյունից:

Դեռ ավելին, ապրանքների մատակարարման e-Invoicing համակարգով հարկային հաշիվ առաքելիս համակարգը հաշվարկվում է ոչ միայն ամբողջական, այլ նաև՝ հարյուրերորդական թվով, իսկ բանկային փոխանցումները նույն ձևաչափով՝ օրինակ 533,333.33: Լուման դրամական միջոց է և որպես շրջանառու միջոց օգտագործվում է Հայաստանի Հանրապետությունում:

Սա աներկբա է և որևէ մեկնաբանությունների տեղիք չի տալիս:

Ընթացակարգի խախտում է հանդիսանում գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը /մարտի 7-ի թիվ 3 արձանագրությամբ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկը բավարար գնահատելու մասին/, այլ ոչ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած առաջարկը: Գնահատող հանձնաժողովը պարտավոր էր պատշաճ կերպով հաշվարկը ստուգել և գնահատել, այլ ոչ թե դրսևորեր նման մոտեցում և կայացներ նման որոշում:

«Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկում առկա են անհամապատասխանություններ՝ կոպիտ սխալներ, մասնավորապես գնային առաջարկի «Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)», «ԱԱՀ» և «Ընդհանուր գինը» սյունակներում նշված թվերի հաշվարկները ճիշտ չեն: Մասնակիցը գնային առաջարկը՝ «Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)» լրացնում է նաև «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցման armeps.am էլեկտրոնային հարթակում, իսկ պայմանգրի կնքման փուլում համակարգի «Արժեքին» հստակ ավելանում է ԱԱՀ-ն՝ 20%, որը կազմում է 1 016 666.6: Գնումների օրենսդրությամբ չի սահմանվում, որ տասներորդական նիշերը պետք է դեպի վերև կամ ներքև կլորացվեն:

Մրցույթի հրավերի 5.2 կետով հստակ սահմանված է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Հաշվարկը պետք է լինի հստակ, որպեսզի այլ մեկնաբանություններ կամ խտրական հայեցողական դրսևորումներ չլինեն:

Տվյալ պարագայում մասնակիցների առաջարկները գնահատվում են առաջինը ստուգելով հաշվարկները, որից հետո համեմատվում են նվազագույն գնային առաջարկները: Օրենսդրությունն ու մրցույթի հրավերը կկրեն դեկլարատիվ բնույթ, եթե մասնակիցների գնային առաջարկների հաշվարկը գնահատող հանձնաժողովը իրականացի կլորացման ձևաչափով, արդյունքում մասնակիցների մի մասի համար կստեղծվեն նպաստավոր պայմաններ, իսկ մյուս մասի համար անհավասար մրցակցային դաշտ, ինչն ուղղակի կլինի խտրականության դրսևորում:

Ինչ վերաբերվում է ֆինանսների նախարարության կողմից հաստատված օրինակելի ձևին, ապա այն երբևէ չի վիճարկվել: Խոսքը վերաբերվում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությանը, այն է, որ 5083.33 հազար դրամը, եթե բազմապատկենք հազարով կստացվի 5 083 330 դրամ, որին ավելացնենք ԱԱՀ-ն 1 016 666 կստացվի 6 099 996 դրամ, այսինքն 4 դրամ պակաս «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկից, այսինքն ըստ

հաշվարկի՝ Արժեք + ԱԱՀ = 6 099 996, այսինքն 4 դրամ պակաս ներկայացրած ընդհանուր գումարից:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը, գնահատող հանձնաժողովը, չունեն գնումների օրենսդրությամբ սահմանված իրավասություն՝ տասնորդական (ոչ անվերջանալի) թվերը կլորացնելու համար:

Տվյալ դեպքում «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկում նշված ելակետային 5 083 333 թվի ԱԱՀ-ն և ընդհանուր գումարը չպետք է կլորացնվեին, քանի որ 5 083 333 ելակետային թվի ԱԱՀ ստացվում էր հստակ 1 016 666,6 դրամ, իսկ ընդհանուր գումարը՝ 6 099 999,6 դրամ, այլ ոչ թե անվերջանալի ինչ-որ հարյուրերորդական կամ հազերերդական ամբողջության թիվ:

Առնվազն տարակուսանք են առաջացնում պատվիրատուի թե մոտեցումները և թե մեկնաբանություններն ըստ էության:

Այսպիսով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերին «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկի (այսուհետ՝ Գնային առաջարկ) հայտը ենթակա է մերժման, քանի որ Գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ կոպիտ սխալներ, մասնավորապես Գնային առաջարկի «Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)», «ԱԱՀ» և «Ընդհանուր գինը» սյունակներում նշված թվերի հաշվարկը ճիշտ չէ:»:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Հիմք ընդունելով վերը հիշատակված նորմերը և գործի փաստական հանգամանքները, Բողոքաբերը բողոքներ քննող անձին խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ս.թ. մարտի 19-ի նիստի թիվ 5-րդ արձանագրությամբ կայացրած որոշումը, քանի որ դրանից բխող հետագա գործողությունները կատարելու դեպքում բողոքը կդառնա առարկայազուրկ և դրանով «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ին կհասցվեն վնասներ:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ ս.թ. մարտի 7-ի, 15-ի, 19-ի նիստերի համապատասխանաբար թիվ 3-րդ, 4-րդ, 5-րդ արձանագրություններով կայացրած որոշումները՝ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ գնային առաջարկը բավարար գնահատելու, 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր պահանջելու, գնահատելու և հաղթող ճանաչելու վերաբերյալ:

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19»» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին վերագնահատել «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ գնային առաջարկը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 18.04.2019թ. գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից գրավոր որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի կողմից 21.03.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

- 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

- 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր)

- 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

- 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող

հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում, հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հարկի հաշվարկը կատարվում է հայկական դրամով:

Օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «փրփրարարի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել 4 ընկերություն, որոնց թվում է նաև «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն և «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Գնման առարկան խմբավորված է եղել «1» չափաբաժում:

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19»» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.03.2019թ. ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ 07.05.2018թ. գնահատող հանձնաժողովը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, որի նրկայացրած գնային առաջարկի արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) նշվել է 5 083 333 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն՝ 1 016 667 դրամ, իսկ Ընդհանուր գինը նշվել է 6 100 000 դրամ:

Հանձնաժողովը նույն արձանագրությամբ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գնահատել է բավարար՝ հիմք ընդունելով գնային առաջարկով ներկայացրած Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) 5 083 333 դրամ:

19.03.2019թ. թիվ 5 արձանագրությամբ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ գնային առաջարկի արժեքը նշվել է 5083.33 հազար դրամ առանց ԱԱՀ:

«Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի կողմից 21. 03. 2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որով «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն վիճարկել է Հանձնաժողովի կողմից վերջինիս հայտի գնահատման արդյունքները:

Բողոքաբերը բողոքով նշել է, որ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկում առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես, գնային առաջարկի «ԱԱՀ» և «Ընդհանուր գինը» սյունակներում նշված թվերի հաշվարկները ճիշտ չեն: Եթե ներկայացրած գնային առաջարկի արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) նշվել է 5 083 333 ՀՀ դրամ, ապա դրա նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ն կկազմի նշված գումարի 20%, կամ 1 016 666.6, այլ ոչ թե մասնակցի կողմից նշված՝ 1 016 667 դրամ: Համապատասխանաբար, մասնակցի առաջարկած ընդհանուր գինը (արժեք+ԱԱՀ) կկազմի ոչ թե 6 100 000 դրամ, այլ 6 099 999.60 դրամ: Ըստ բողոքաբերի, «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է գնումների մասին ՀՀ օրեսդրության պահանջների, ինչպես նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի կոպիտ խախտումներով, իսկ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ ցուցաբերել է կամայական և հայեցողական մոտեցում:

Բողոքաբերը նշել է նաև, որ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինն առանց ԱԱՀ նշվել է 5083.33 հազ. դրամը: Հետևաբար, ստացվում է, որ եթե նշված գումարին ավելացնենք ԱԱՀ-ն՝ 1 016 666 դրամը, ապա կստացվի 6 099 996 դրամ, այսինքն 4 դրամ պակաս «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկից, այսինքն՝ 4 դրամով պակաս ներկայացրած ընդհանուր գումարից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

1. «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն և «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2. Հանձնաժողովը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, որի ներկայացրած գնային առաջարկի արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) նշվել է 5 083 333 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն՝ 1 016 667 դրամ, իսկ Ընդհանուր գինը նշվել է 6 100 000 դրամ:

3. 19.03.2019թ. թիվ 5 արձանագրությամբ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ գնային առաջարկի արժեքը նշվել է 5083.33 հազար դրամ առանց ԱԱՀ:

4. «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ավելացված արժեքի հարկի բաղադրիչի հաշվարկը կատարվել է՝ չափի միավոր ընդունելով դրամը (լումաները կլորացվել են դեպի վերև), ընդ որում, Ընթացակարգի շրջանակներում «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկն եղել է նվազագույնը:

Այսպիսով, համադրելով վերոհիշյալ փաստական հանգամանքները և իրավական նորմերը, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/19» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը բավարար գնահատելով «Վ.Վ.Վ.-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ գործել է իրավաչափ, իսկ «Ռեալ Բուսինես»

ՍՊԸ-ի կողմից 21. 03. 2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 21.03.2019թ.ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ